

ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Հասարակական աշխարհահամակարգ է.

- 1) քաղաքը
- 2) անապատը
- 3) ճահիճը
- 4) անտառը

2 Հյուսիսային կիսագնդի լեռների ո՞ր լանջերն են առավել շատ անտառապատ.

- 1) հարավային
- 2) հարավարևելյան
- 3) հյուսիսային
- 4) հյուսիսարևելյան

3 Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:

- 1) հյուսիսային
- 2) արևմտյան
- 3) հարավային
- 4) արևելյան

4 Քարտեզում 2 կետերի հեռավորությունը 7 սմ է, իսկ իրականում՝ 49 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 7000 000
- 2) 1 : 70 000 000
- 3) 1 : 70 000
- 4) 1 : 700 000

5 Այն ասույները, որոնք չեն հասցնում մթնոլորտում այրվել և ընկնում են Երկրի վրա, կոչվում են.

- 1) գիսավորներ
- 2) արբանյակներ
- 3) երկնաքարեր
- 4) աստղակերպեր

6 Յուրաքանչյուր ժամային գոտու ժամանակը հարևան գոտու ժամանակից տարբերվում է.

- 1) 45 րոպեով
- 2) 60 րոպեով
- 3) 15 րոպեով
- 4) 30 րոպեով

7

Նկար 1-ում պատկերված է.

- 1) ջրվեժ
- 2) հրաբուխ
- 3) ջրհոր
- 4) գեյզեր

Նկար 1



8

Փոխակերպային ապար է.

- 1) բազալտը
- 2) քարածուխը
- 3) մարմարը
- 4) կրաքարը

9


Մթնոլորտային ցածր ճնշման մարզը կոչվում է.

- 1) թայֆուն
- 2) անտիցիկլոն
- 3) ցիկլոն
- 4) տորնադո

10

Նկար 2-ում n^o թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը բարեխառն լայնություններում:

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2



Նկար 2

11 Նշվածներից ո՞ր ծովը Անտարկտիդայի ափերը չի ողողում:

- 1) Ռոսսի
- 2) Ամունդսենի
- 3) Բարենցի
- 4) Բելինսսհաուզենի

12 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 4 մ^2 է, արագությունը՝ 3 մ/վ : Գետի ծախսը կլինի.

- 1) $24 \text{ մ}^3/\text{վ}$
- 2) $36 \text{ մ}^3/\text{վ}$
- 3) $12 \text{ մ}^3/\text{վ}$
- 4) $70 \text{ մ}^3/\text{վ}$

13 Գոլորշացման քանակը արտահայտում են.


- 1) գրամով
- 2) բալով
- 3) միլիմետրով
- 4) տոկոսով

14 Մթնոլորտային տեղումներից ո՞րը Երկրի մակերևույթ չի թափվում ամպերից.

- 1) կարկուտ
- 2) ցող
- 3) անձրև
- 4) ձյուն

15 Նկար 3-ում ո՞ր թվով է պատկերված սավանաների զոնան:

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



Նկար 3

16

Ի՞նչն է առավելապես շատ բնորոշ տունդրայի բնական զոնային:

- 1) ծառային բուսականության տարածումը
- 2) խոտակեր խոշոր կենդանիների տարածումը
- 3) հողի բազմամյա սառածությունը
- 4) պողոզուլային հողերի գերակշռությունը

17


Քարտեզ 1-ում Դ տառով n՞ր նեղուցն է նշված.

- 1) Բասսի
- 2) Կուկի
- 3) Դրեյկի
- 4) Թորենսի

18

Քարտեզ 1-ում Ը տառով n՞ր նավահանգիստն է նշված.

- 1) Սիդնեյ
- 2) Դարվին
- 3) Մելբուռն
- 4) Կանբերա



19

Բնութագրումով որոշել թերակղզին.

Ասիայի մեծ թերակղզիներից է և ունի տիպիկ մուսսունային կլիմա: Տարածքի գերակշիռ մասը զբաղեցնում է աշխարհի խոշորագույն երկրներից մեկը: Ո՞ր թերակղզին է.

- 1) Հնդկաչին
- 2) Սկանդինավյան
- 3) Արաբական
- 4) Հինդուստան

20

Ո՞ր լեռնաշղթայից է սկիզբ առնում Հոենոս գետը:

- 1) Պիրենեյներից
- 2) Ալպերից
- 3) Բալկաններից
- 4) Անդերից

21

Նշված ծովային հոսանքներից ո՞րն է սառը.

- 1) Ալյասկայինը
- 2) Լաբրադորյանը
- 3) Անտիլյանը
- 4) Գոլֆստրիմը

22

Հյուսիսային Ամերիկայում աճում են.

- 1) բիզոնի խոտ և սեքվոյա
- 2) սեյբա և բաոբաբ
- 3) հևեա և էվկալիպտ
- 4) ակացիա և ժենշեն

23

Հարավային Ամերիկայում է.

- 1) Դեմավենդ լեռնագագաթը
- 2) Գվիանական սարահարթը
- 3) Կորդիլիերյան լեռնաշղթան
- 4) Առափնյա դաշտավայրը

24

Ո՞ր լիճն է Հարավային Ամերիկայում:

- 1) Լադոգա
- 2) Միչիգան
- 3) Արալյան
- 4) Տիտիկակա

25

Անտարկտիդան հայտնաբերել են.

- 1) ամերիկացիները
- 2) ռուսները
- 3) շվեդները
- 4) անգլիացիները

26

Ո՞ր նեղուցով է Արաբական թերակղզին բաժանվում Աֆրիկայից.

- 1) Լա Մանշի
- 2) Բար-Էլ-Մանդեբի
- 3) Լապերուզի
- 4) Մալակկայի

27

Տարածքի մեծությամբ աշխարհի գերխոշոր պետություններ են.

- 1) Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան
- 2) Նիկարագուան և Մեքսիկան
- 3) Իտալիան և Շվեյցարիան
- 4) Կանադան և Ավստրալիան

28

Նշվածներից ո՞ր երկիրն ունի ավելի քան 200 մլն բնակիչ.

- 1) Ղազախստանը
- 2) Ռուսաստանը
- 3) Ինդոնեզիան
- 4) Ճապոնիան

29

Նշվածներից ո՞ր երկիրը ելք ունի դեպի Պարսից ծոց.

- 1) Լիբանանը
- 2) Եգիպտոսը
- 3) Իրանը
- 4) Սիրիան

30

Հետամնաց ագրարային երկրներ են.

- 1) Արգենտինան և Մեքսիկան
- 2) Քուվեյթը և Վենեսուելան
- 3) Չադը և Եթովպիան
- 4) Հնդկաստանը և Չինաստանը

31

Երկրի տարածքը կազմում է 20000 կմ², բնակչության թիվը՝ 7 մլն մարդ: Բնակչության միջին խտությունը կլինի.

- 1) 270 մարդ/ կմ²
- 2) 420 մարդ/ կմ²
- 3) 350 մարդ/ կմ²
- 4) 130 մարդ/ կմ²

32 Միգրացիայի պատճառ չէ.

- 1) քաղաքականը
- 2) ազգայինը
- 3) կազմակերպվածը
- 4) տնտեսականը

33 Քաղաքաբնակների բացարձակ թվով աշխարհում առաջին երկիրն է.

- 1) Պակիստանը
- 2) Չինաստանը
- 3) Ռուսաստանը
- 4) Հնդկաստանը

34 Ջարգացման արդյունաբերական փուլում գտնվող երկրներ են.

- 1) Մոզամբիկը և Բանգլադեշը
- 2) Բրազիլիան և Արգենտինան
- 3) Գերմանիան և Բելգիան
- 4) Ֆրանսիան և Իտալիան

35 Գազի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Չինաստանը և Ճապոնիան
- 2) Ավստրալիան և Հնդկաստանը
- 3) Գերմանիան ու Ֆրանսիան
- 4) Նիդեռլանդները և Ռուսաստանը

36 Շաքարեղեգի մշակությամբ աշխարհում առաջատար երկրներից է.

- 1) Կանադան
- 2) Ճապոնիան
- 3) Ռուսաստանը
- 4) Բրազիլիան

37 Չույզերով տրված պետություններից որո՞նք ունեն ցամաքային սահման ՌԴ հետ:

- 1) Ուկրաինա և Մոլդովա
- 2) Թուրքիա և Իրան
- 3) Շվեդիա և Հայաստան
- 4) Էստոնիա և Վրաստան

38

Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-----------------|--------------|
| 1. Ավստրիա | ա. Ամստերդամ |
| 2. Բելգիա | բ. Փարիզ |
| 3. Նիդեռլանդներ | գ. Բրյուսել |
| 4. Ֆրանսիա | դ. Վիենա |

- 1) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
- 2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 3) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
- 4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ

39

Դեպի Կասպից ծով ելք ունի.

- 1) Սաուդյան Արաբիան
- 2) Արաբական Միացյալ Էմիրությունները
- 3) Իրանը
- 4) Աֆղանստանը

40

Ո՞ր պետությունն է գտնվում Հարավային Ասիայում:

- 1) Մոնղոլիա
- 2) Ճապոնիա
- 3) Պակիստան
- 4) Չինաստան

41

Ջուլգերով տրված պետություններից որո՞նք են միապետություն:

- 1) Ալժիր և Նիգերիա
- 2) Մարոկկո և Եթովպիա
- 3) Եգիպտոսը և Թունիսը
- 4) Սվազիլենդը և Լեսոտոն

42

Իտալիային պատկանող կղզի է.

- 1) Կալիմանտանը
- 2) Կորսիկան
- 3) Թասմանիան
- 4) Սիցիլիան

43

«Կեղծ ուրբանիզացիան» բնորոշ է.

- 1) Հարավային Եվրոպային
- 2) Հյուսիսային Ամերիկային
- 3) Լատինական Ամերիկային
- 4) Արևմտյան Եվրոպային



քարտեզ 2

44

Քարտեզ 2-ում Գոգի լեռնազագաթը ո՞ր տառով է նշված.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ

45

Քարտեզ 2-ում Քաջարանի հանքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Ը
- 3) Ե
- 4) Զ

46

ՀՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արևելքում սահմանակից է Ադրբեջանին:
- 2) Հյուսիսում սահմանակից է Թուրքիային
- 3) Ամենաերկար սահմանն ունի Իրանի հետ:
- 4) Արևմուտքում սահմանակից է Վրաստանին:

47

ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 2) Միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն:
- 3) Ամենաշատ տեղումները թափվում են Արփայի գոգավորությունում:
- 4) Հստակ արտահայտված է հյուսիսից հարավ փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:

48

Մինչխորհրդային Հայաստանում տնտեսության ո՞ր ճյուղերին էր բաժին ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի գերակշիռ մասը.

- 1) գորգագործությանը և կաուչուկի արտադրությանը
- 2) պղնձաձուլությանը և գինու-կոնյակի արտադրությանը
- 3) շվեյցարական պանրագործությանը և մրգի պահածոների արտադրությանը
- 4) սև մետաղաձուլությանը և կաշվի-կոշիկի արտադրությանը

49

Մեծամորի աէլի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ ամենահզոր էլեկտրակայանն է:
- 2) Արարատի մարզում է:
- 3) Միակ ատոմակայանն է հարավկովկասյան տարածաշրջանում:
- 4) Աշխատում է տեղական միջուկային վառելիքով:

50

Չույզերով տրվածներից որո՞նք են ոսկու հանքավայրեր.

- 1) Շվանիձորը և Թեժ լեռը
- 2) Մեղրաձորը և Սոթքը
- 3) Կապանը և Ալավերդին
- 4) Քաջարանը և Ագարակը

51

Թթվային անձրևների առաջացման պատճառներից է.

- 1) հանքային պարարտանյութերի օգտագործման չարաշահումը
- 2) գործարաններից ծծմբային միացությունների արտանետումները
- 3) մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը
- 4) խոշոր քաղաքներում զբոսաշրջության զարգացումը

52

«Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» գույգերից ընտրել ճիշտը:

- 1) երկրաջերմային ռեսուրս — անսպառ
- 2) հանքային ռեսուրս — սպառվող վերականգնվող
- 3) կենսաբանական ռեսուրս — անսպառ
- 4) կլիմայական ռեսուրս — սպառվող վերականգնվող

53

Տրվածներից ո՞րը հողաբարելավման միջոցառում չէ.

- 1) գերխոնավ հողերի չորացումը
- 2) հակաէրոզիոն միջոցառումների կազմակերպումը
- 3) քարամաքրումը
- 4) ջրամբարների կառուցումը

54

Տրվածներից ո՞րն է ՄԱԿ-ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն:

- 1) ՅՈՒՆԵՊ
- 2) ՅՈՒՆԻԿՏԱԴ
- 3) ՅՈՒՆԵՍԿՕ
- 4) ՅՈՒՆԻՍԵՖ

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թույլ զարգացած երկրների տնտեսության մեջ գերակշռողը գյուղատնտեսության բաժինն է:
- 2) Թույլ զարգացած երկրներում բնապահպանական հիմնախնդիրներ չկան:
- 3) Թույլ զարգացած երկրների բնառեսուրսային ներուժը վիթխարի է, օգտագործման տեսանկյունից արդյունավետությունը ցածր:
- 4) Թույլ զարգացած երկրներում զանգվածային անգրագիտությունը հետամնացության ցուցանիշներից է:

56

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել մնացորդային ծագում ունեցող լճերը.

- | | |
|-----------|------------|
| 1) Սևանա | 5) Արալյան |
| 2) Չադ | 6) Նյասա |
| 3) Կասպից | 7) Վերին |
| 4) Լադոգա | 8) Էյր |

57

Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.

- | | |
|-------------|------------|
| 1) Նիգեր | 5) Մեկոնգ |
| 2) Սիրդարյա | 6) Զամբեզի |
| 3) Մուրեյ | 7) Տիգրիս |
| 4) Ինդոս | 8) Օրանժ |

58

Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».

- | | |
|-----------|-------------|
| 1) Սիրիա | 5) Ուկրաինա |
| 2) Եմեն | 6) Թուրքիա |
| 3) Կանադա | 7) Իրան |
| 4) ԱՄՆ | 8) Լատվիա |

59

Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է մահմեդականությունը.

- | | |
|--------------------|--------------|
| 1) Թուրքիա | 5) Չինաստան |
| 2) Տաջիկստան | 6) Բանգլադեշ |
| 3) Հնդկաստան | 7) Պակիստան |
| 4) Հարավային Կորեա | 8) Ալբանիա |

60

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են մեքենաշինությամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Հնդկաստան | 5) Ճապոնիա |
| 2) Ղազախստան | 6) Իրան |
| 3) Ավստրալիա | 7) Աֆղանստան |
| 4) Գերմանիա | 8) Թուրքիա |

61

Գրել այն բնակավայրերի համարները, որոնք երկաթուղային կայարաններ չեն.

- | | |
|-------------|---------------|
| 1) Գորիս | 5) Վարդենիս |
| 2) Մարտունի | 6) Վաղարշապատ |
| 3) Մարալիկ | 7) Արարատ |
| 4) Սոթք | 8) Աբովյան |

62

Տրված պետությունների համարները դասավորել դրանց տարածքի մեծության նվազման կարգով:

- 1) Կանադա 2) ԱՄՆ 3) Չինաստան 4) Ռուսաստան

63

ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել Երևանից ունեցած հեռավորության աճման կարգով.

- 1) Աշտարակ 2) Սևան 3) Բերդ

(64-65). Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 1500 մարդ: Եկաճների թիվը 2200 մարդ է, մեկնաճների թիվը՝ 1800 մարդ:

64 Որոշել միգրացիայի մնացորդը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

66 Երկրում ցորենի ցանքատարածությունների մակերեսը 4 մլն հա է, համախառն բերքը՝ 16 մլն տ: Որքա՞ն է ցորենի միջին բերքատվությունը:

67 24000 կՎտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու համար քանի՞ տոննա քարածուխ է հարկավոր(քարածխի ջերմային գործակիցը 1 է):

68

Երկրի բնակչության թիվը 12 մլն մարդ է, տարածքի մակերեսը՝ 80 000 կմ²: Որքա՞ն է երկրի բնակչության միջին խտությունը:

69

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Կարնո դաշտը Արևմտյան Եփրատի հովտում է:
- 2) Արևելյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից են Խնուսի, Մշո և Խարբերդի դաշտերը:
- 3) Բասենի դաշտը տարածվում է Ճորոխ գետի վերին հոսանքի ավազանում:
- 4) Խարբերդի դաշտում միախառնվում են Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերը:
- 5) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Ալաշկերտի դաշտն է:
- 6) Երզնկայի դաշտը Արևմտյան Եփրատի վերին հոսանքի ավազանում է:

70

ՀՀ Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արևմտյան սահմանն անցնում է Գեղամա հրաբխային լեռնավահանի ջրբաժան գծով:
- 2) Կենտրոնական շրջաններում տիրապետողը կլիսաանապատային լանդշաֆտներն են:
- 3) ՀՀ միակ մարզն է, որը չունի արտաքին սահմաններ:
- 4) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները:
- 5) Շատ հարուստ է հանքային աղբյուրներով:
- 6) Անտառները տարածվում են մարզի արևելյան շրջաններում: